

նութեամբ որոշեց հարցապնդում մը ընել կառավարութեան :

Եւ քիչ յետոյ, կուսակցութեան երկու անգամներ — Ուէջլուդ եւ Միլլ — իրարու ետեւէ տեղեկութիւններ պահանջեցին արտաքին գործոց նախարարէն «Հայկական Օճախին» խնդրոյն շուրջը, որ այն ատեն զրուած էր միջդաշնակից դիւանագիտութեան սեղանին վրայ: Անդլիան դեռ կը քայլեր: Իսկ Փրանսան սկսեւ էր նորէն սիրարանել թուրքին հետ եւ արդէն երես կը դարձնէր մեզմէ...: Հեռուն չերթանք:

Նոյն բարեկամական զգացումները հայ ժողովուրդի նկատմամբ տեսանք Աշխատաւորական միւս խոշոր առաջնորդին մօտ — Ֆիլիպ Սնորդէնի: Նոյնպէս արտաքուստ պաղ, կենդրոնացած, վերապահոտ ու փոքր ինչ անմատչելի, ինչպէս ամէն մի անդլիացի, բայց ներքուստ բարի, սրտցաւ ու անկեղծ, շիտակ ու անկաշառ:

Երբ օր մը ժամադրութիւն առնելով դացի իր բնակարանը, թառած նոյն Հէմփստեէտ արուարձանի հեռաւոր բարձունքներուն, գտայ զինքը աղքատիկ սենեակի մը մէջ, նստած գլուխով քննադատի առջեւ — եռանդով կ'արտագրէր ինչ որ նօթեր անդլիական թերթերէն: Քովը՝ տիկին Մնորդէն, բարձրահասակ, դրաւիչ ու մտաւորական կին մը, որ փայլուն զիրք մը ունի Մեծն Բրիտանիոյ ընկերավարական կանոնաց շարժման մէջ:

— «Այս նօթերը ձեզի համար կ'արտատրուեմ, բոսւ Մնորդէն, երբ ներս մտայ: Բրիտանական ալիւսալլ եկեղեցիներու բարձրաստիճան հոյիւներու որոշումներն են հայկական դատին ի նպաստ...: Կը խորհիմ, որ ձեզի համար արժէքաւոր են այս ցոյցերը, վասնզի եկեղեցիները մեծ ազդեցութիւն ունին մեր երկրին մէջ»...:

Ըսած եմ արդէն, որ Անդլիոյ ընկերավարական պարագլուխները դերժ չեն տեսակ մը կրօնական միաստիցիմէ եւ առհասարակ սերտ յարաբերութիւն կը պահպանեն եկեղեցիներու, մասնաւորապէս ազատ եկեղեցիներու ներկայացուցիչներուն հետ:

Ցամաքային երկիրներու ընկերավարականներուն, անշուշտ, զարմանք պատճառեց այն

հանդիսաւոր հրովարտակը, որ Հենտերսըն, արտաքին գործոց ընկերավարական նախարարը անցեալ օր ուղղեց «Մեծն Բրիտանիոյ եկեղեցիներուն», որոնց կ'աւետէր Ազգերու Դաշնակցութեան եւ համաշխարհային խաղաղութեան յոռաջողութիւնները...: Բայց անդլիական բարբերուն համար բնաւ խորթ չեն նման երեւոյթներ:

Մեր գրոյցի ընթացքին պարզուեցաւ, որ Մնորդէն շատ քիչ ծանօթութիւններ ունի հայկական եւ առհասարակ արեւելեան խնդիրներու շուրջ: Նմանապէս՝ Թօմաս, Կլայնս, Շօօ եւ ուրիշներ: Մարդիկ ամբողջ կեանքը ապրեւ են իրենց երկրի ընկերային շարժումներու, քնտրական պայքարներու ու միթինկներու մէջ...: Մակ'ոնալդ եւ Հենտերսըն միակն են, որ ճամբորդեր են հեռու երկիրներ եւ քիչ շատ ուսումնասիրեր են այդ հեռաւոր խնդիրները:

Ջրոյցէն ետք, հրաւիրեցի երկու ամուսինները նոյն օրը իրիկուան հայոց դեսպանատանը տեղի ունենալիք ընթրիքին, որուն հրաւիրուած էր եւ Մակ'ոնալդ: Տիկինը սիրով ընդունեց հրաւէրը, իսկ Ֆիլիպ Մնորդէն ցաւ յայտնեց, որ իր կիսասնդամալոյժ վիճակը չէր թոյլ տար իրեն յաճախ անէն դուրս գալու: Հեծանիւի արկածի մը հետեւանքով, մէկ տաքը չի կրնար շարժել եւ ատիկա ծանր աղէտ մըն է իրեն համար:

Վախ, ոսկրոտ մարդ մըն է, անշարժ, խուզարկու նայուածքով, Լէյպըր Փարքի մեհէնէն կարող, իմացական ու պերճախօս դէմքերէն: Ան երբ իր գաւազանին յինուած՝ Երեւան կուգայ մեծ միթինկներու բեմին վրայ, կը յարուցանէ անվերջ ծափերու փոթորիկ մը: (Նոյն փոթորիկը — տարբեր իմաստով — բարձրացուց երէկ Լահէի վեհաժողովին օտար, աշանդիացի պատգամաւորներու շարքերում — երկիւղ, շփոթութիւն եւ անասելի իրարանցում...):

Մնորդէն անկարող լինելով դալ, բայց հայոց դեսպանատան համեստ խնձոյքը տեղի ունեցաւ Մակ'ոնալդի ու տիկին Մնորդէնի մասնակցութեամբ: Ներկայ էր տէր եւ տիկին Բազրատունիներուն հետ, եւ Ա. Ահարոնեան: Հանելի ժամանց մը, որմէ յետոյ հրաժեշտ